ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴՐՄ

ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ

M. BENIARD
Poste Restante
Athnes (Grèce)

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար

Իւրաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն։

ԲՈՒՄՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ·
ԱՄԵՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ· · · · · · 5 Գրանկ
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ· · · · 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ· · · · ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը։

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր։

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ | ԱԹԷՆՔ | Nr 4 ՅՈՒՆԻՍ Nr 4 | 1894 | ՄԻԱՄՍԵԱՅ

ԴԱ ԱՆՅԱՂԹԵԼԻ Է.....

ԱՅԴ ԲՈՒՐՔԷ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՓԱՌՔԻ ԱՐՇԱՆՆ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՀՈՒՄ....
ԲԱՅՑ ԽՐԱԽՏ ԴԻՑՈՒՀԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆ, ԱՆՅԱՂԹԵԼԻ Է....



«ՈՉԽԱՐ Է»

Ինչպէս եկեղեցու, նոյնպէս կառավարութիւնների և առանձնաշնորհված դասակարգերի աչքին ժողովուրդը «ոչխար է»: Շտապում ենք ճշգել մեր խօսքը. ժողովուրդը տարբերվում է ոչխարից նրանով, որ այս վերջինը չորքոտանի է և իրանից, ժողովրդից, աւելի խնամված ու գուրգուրված, դմակը պարարտացնելու համար հոգս տարված: Մինչդեռ ժողովուրդը, դա—երկոտանի «ոչխար է», մարդկային մի «տգեղ բազմութիւն է» և «օգտակար է» ուրիշ կերպով: Նա ուրիշներին կերակրում է ո՛չ թէ, ոչխարի նման, իր մսով, այլ իր մարմնի կենսատու հիւթերն ու արիւնն է նա մարմնացնում աշխատանքի մէջ, այսպէս ասած՝ բ ի ւ ր ե ղ ա ց ն ո ւ մ (cristaliser) իր աշխատանքի արդիւնքի մէջ և բերում դնում ունեւորի ճոխ սեղանի վրայ: Սպանիչ աշխատանք, ստորացնող ծառայութիւն:

Բռնակալութեան յատկութիւնը ժողովրդի մէջ՝ կառավարութիւնների, ունեւոր դասակարգերի կողմից ընդունվում է խիստ սահմանափակ կերպով: Ժողովուրդը «կարող է» և պէտք է իմանայ իբր միայն իր առօրեայ աշխատանքը, իր բռնակրութիւնը, իր եզն ու գոմէշը, կալն ու էշը.... Իսկ այն ամէն մնացածն—այլ խօսքով, բոլորը,—որ վերաբերութիւն ունի քաղաքական, հասարակական, տնտեսական կարգերին, մտաւոր ու բարոյական զարգացման, ընտանեկան դրութեան եւ այլն—այդ բոլորի նկատմամբ նա «իրաւունք չունի և չէ կարող» իր կարծիքն ու հայեացքն ունենալ: Ինչպէս որ կը կարգադրեն, «հրաման կը տան» նրան իր «հովիւները», այսինքն ժողովրդի վզին նստած տզրուկները—կառավարութիւններն ու առանձնաշնորհված դասակարգերը, նրա համեմատ էլ պէտք է անի եւ մտածէ նա, աշխատաւոր ժողովուրդը:

Օ՜, սքանչելի թէօրիաներ, արժանի շատ աւելի վայրենի դարերի.... Արդարեւ, կարծես թէ կառավարութիւններն և ունեւոր, վարիչ դասակարգերը լրջօրէն են ժողովրդին ոչխարի տեղ ընդունում....

Դո՜է, այդ բոլոր թէօրիաները ներկայ դարում այլ եւս խելքի խեղկատակ միմոսութիւններ են: Պատմութիւնն այնտեղ է հաստատելու համար, որ ժողովուրդն այլ եւս դուրս է գալիս և մասամբ դուրս է եկել այդ ո չ խ ա ր ա կ ա ն վիճակից, որի մէջ այնքան ջեզուիտութեամբ ու բռնութեամբ նրան պահել ու ճնշել են կառավարութիւններն ու վարիչ դասակարգերը: Սատանան տանի ժողովրդին. այդ «ոչխարն» իր գանգում կարծես խելք ունի այժմ: Կեանքի այնպիսի պայմաններում է ապրում նա հիմա, որ արդէն սկսել է դիտել իր շրջապատող նիստ ու կացը: Նա այժմ շատ բան է հասկանում: Նա հասկանում է այժմ, որ այն բոլորն, ինչ իրան ժողովրդի, շահի համար վնասակար է, կառավարութիւններն ու վարիչ դասակարգերը նրան ներկայացրել են իբրեւ նախասահմանված դրութիւն: Ի՞նչ նախասահմանութիւն: Մէկ ինքնակոչ, մի բուռ մարդիկ տիրապետել են երկրի կառավարութեան իրաւունքին եւ իրանց շահի համեմատ, իրանց ուզածի պէս օրէնքներ են սահմանում ընդդէմ աշխատաւոր դասակարգի: Ովքե՞ր են այդ մարդիկը: Ինքնակոչներ, տզրուկներ, բռնակալներ.... Թող կորչե՛ն այդ բոլոր բաղդախնդիրները, սրիկաները, ժողովրդի իրաւունքը գողացողները: Ժողովուրդն—ամէն բան է, և ներկայի կեանքը նրա բարօրութեան համար այնպիսի միջոցներ է առաջ բերել և ուղիներ բացել, որ մօտ ապագայում նրան, և նրա հետ ամբողջ մարդկութեան, աւետեաց աշխարհի հաւասարութիւնը, սէրը, երանութիւնն է խոստանում:

Ե՛հա թէ ինչ են սկսել հասկանալ ժողովուրդները, և զգում են, կամ ուղղակի գիտեն, որ այդ աւետեաց աշխարհը հասնելու համար նրանք պէտք է ձգտեն իրանց կենսական շահերի իրագործման, զինվելով հզօր կամքով, պարզ գիտակցութեամբ և Յեղափոխութեան սրով: Օ՜, յափըշտակիչ, սո՛րբ մարտ, ի՛նչպիսի ոգեւորութեամբ նա, ժողովուրդը, այդ աշխատաւոր, թըշուառ, մերկ, սօթի, ճնշված, ծեծված բազմութիւնը, կը նետվէ քո հրաշունչ և արիւնալի գիրկը....

Եւ նա այդ կանի, նա այդ անում է արդէն, ամէն երկրում, ամէն տեղ, մինչեւ իսկ մեր ըստրուկ Հայաստանում.... Ա՜յս էլ քեզ ոչխա՜ր..

«Հովիւներն», անտարակոյս, իրանց շներով ոչինչ չը պիտի կարողանան այլ եւս անել այդ «ոչխարի» կատաղութեան հետ: Այն ոսկէ բերդերը, պալատներն ու ամրոցները, որոնց մէջ «հովիւները» կուշտ ու փառաւոր կեանք են վարում, բոլորը ջարդվելով, քանդվելով, կործանվելով՝ գլորվելու վրայ են ժողովրդի բարկութիւնից.... Կեանքի՛ պայմանները, իրերի ընթացքը, ժողովրդի գիտակցութիւնը, բոլորը սոսկալի թնդանօթներ են դարձել՝ ուղղված ընդդէմ օտարակեր, տզրուկ գողերի և սրանց պաշտպանած ներկայ ապականված, անարդար, հնացած կեանքի.... Ա՜յս էլ քեզ հովի՜ւ...

Թող ուրեմն, ժողովուրդը հաւաքէ այդ հոտած աղբը մի պարկի մէջ և շպրտէ այն հորը, որտեղից այլ եւս դուրս չեն գալիս երբեք—պատմութեան անյատակ վիհը:

Ոչխա՞ր է.... Ինչո՞ւ էք, ուրեմն, սարսափած գո՛ւք, «հովիւնե՛ր».....

ԹՇՈՒԱՌԻ ԱՂԱՂԱԿԸ

Մեր վիզ ծըկած լծի մը տակ,
Որ նըմանը չէ եղեր,
Կաշխատէինք մենք շարունակ,
Արտերնուս մէջ սեւ ցաւեր:
Ամօթն մարդկան արժանիքի,
Հարուստն, ստակով պատիւ գնած,
Աղտոտ ծառայ բռնաւորի,
Մեզ թշնամի լըբացած,
Ապարանի մէջ փռւայեղ

ՇԻՐԻՆ ԱԼԻ
ԵՒ ԻՐ ՍՊԱՆՈՂԸ *)

Յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն կ ե ա ն ք ի ց.

—Տե՛ս, թէ ինչումն է կայանում մեր թշնամութիւնը հէնց մեր դէմ,—սկսաւ խօսել Թաթոսը.—Հէնց էն օրից, երբ մեր պապերը սկըսել են գլուխ տալ բէկերի, իշխանների, թագաւորների, դրանք էլ սկսել են նրանցից կամաց-կամաց դուրս քաշել ազատութեան զգացումը և դարերի ընթացքում, ինչպէս շատ անգամ ասել եմ քեզ, անասնացրել նրանց: Դրա կենդանի օրինակն ունենք այսօր մեր առջեւ: Մեր բէկը, որին դու աւելի լաւ ես ճանաչում, քան ես, նա իր անգթութիւններով յայտնի է և նրա մասին շատ անգամ դու ինքդ ես պատմել ինձ: Դեռ մեր մտքից չէ դուրս եկել Ղօչաղ Մելքօնի սըրտաճմլիկ դէպքը, որը յանդգնել էր բէկի դէմ մի քիչ համարձակ խօսել, պարզելով գիւղացիի ընկած դրութիւնը եւ գթութիւն էր խնդրել բէկից: Քեզ և ամենքիս էլ լաւ յայտնի է, թէ անգութ բէկն ինչ բաղդի արժանացրեց նրան. կրակից կարմրած մէկ երկաթի կտոր բերել տալով ոստիկաններին, բռնի լիզել տվեց նրան: Ղօչաղ Մելքօնն էն օրից մինչեւ էս օր խիստ դանդաղ կերպով և թոթով է խօսում:

Ղօչաղ Մելքօնի դէպքը լսելիս՝ մի սարսուռ յանկարծ ցնցեց Կապետի ամբողջ մարմինը. Նա անգիտակցաբար ձեռքը տարաւ ճակատին, կարծես այդ վայրկեանին նրա վրայ էին գործադրում այդ վայրենի գործողութիւնը: Նրա ճակատից քըրտինքի խոշոր կաթիլներ վայր էին գլորվում:

—Շարունակենք մեր խօսքը,—ասաց Թաթոսը նշմարելով նրա վրդովված դրութիւնը և հանգըստացնել աշխատելով նրան:—Այդ բռնապետները ստրկութիւնը բնաւորութիւն են դարձրել մեր հայերի մէջ և այդ ստրկութեան ոգին նրանցից ժառանգել ենք մենք: Մեզ կողոպտում են ամէն կողմից. մեզ կողոպտում է սուլթանն իր անհամար տուրքերով, մեզ կողոպտում է բէկը, մեզ կողոպտում է միւլթէզիմը (կապալառու), մեզ կողոպտում են ամենաբարձր պաշտօնեաներից սկսած մինչեւ մեր գեղի գզիր քէօռ Ակօփ տղայ Պէտօն, մեզ կողոպտում է և Շիրին-Ալին: Նրանք իրանց համար զէնք են ունեցել բռնութիւնը, սարսափը, բանտը, աքսորը, մինչեւ իսկ մահը: Մեզ կողոպտում է նաեւ մեր կղերական դասը,—շեշտելով՝ վերջացրեց Թաթոսն իր խօսքը, ուղիղ Կապետի դէմքին նայելով:

Կապետը կատաղութիւնից կրճտում էր իր ատամները, այնպէս որ իր դէմքի բոլոր մկանունքները շարժվում էին:

—Եթէ ինձ թողնէին, ասաց նա, յանկարծ ոտքի կանգնելով եւ կատաղութիւնից իր շըրթները կրծոտելով.—հէնց առաջին քայլին կոչընչացնէի այդ անպիտաններին: Ձեր անցեալ օրւան խօսածները, շարունակեց նա, իրաւ որ շատ ճշմարիտ եմ գտնում: Դուք ասում էիք, բռնապետները ստրկացնում են ժողովրդին, իսկ կղերականներն ամրապնդում եւ կապկպում են այդ խեղճերին ամուր շղթաներում.... Ա՜հ, արիւն ծծող ջըլըկներ, գոռաց Կապետը, իր բռունցքը դէպի առաջ մըխելով....

Թաթոսը տեսնելով իր խօսքերի ազդեցութիւնը, մի ներքին բաւականութիւն զգաց եւ այդ ցոյց չը տալով, քաշեց Կապետի թեւից ու նստեցրեց տաքգլուխ երիտասարդին իր մօտ եւ սկսեց շարունակել աւելի ոգեւորված կերպով:

—Վանքերի և եկեղեցիների մէջ որջացած այդ հոգեւորական աւազակներն, աւելի սարսափելի և աւելի վտանգաւոր են դարձել հէնց այն պատճառով, որ նրանք իրանց համար ընտրել են աւելի վնասակար մի զէնք.—մեր կոյր նախապաշարումը և մեր տգիտութիւնը: Մենք երբեք էլ չենք մտածել դրանցից, այդ օտարակերներից, ազատվելու միջոցների վրայ: Մենք, ժողովրդիս մեծամասնութիւնը, կերակրում ենք, հագցնում ենք մէկ ամենաչնչին փոքրամասնութեան. զարդարում ենք սէրայները, զարդարում ենք սուլթանի հարէմ հիւրիներին մեր քսակով. Նրանց ամբարները լցնում մեր ճակատի քրտինքի արդիւքով և մեզ համար կուռքեր, աստուածներ ենք

*) Տես „Ապտակ“ Nr 3.

Մեր դէմ դաւեր կը լարէր,
Ժողովրդիս տուն, հող ու տեղ
Կուտէր, վատին կը մատնէր։

Թշուառութիւնն իր քէնն ունի
Եւ տանջանքըն՝ իր սահման.
Զինուած սիրով ընդհանուրի՝
Զարկինք մենք այն դաւաճան։
Է՜հ, ի՞նչ — պարտք էր. պրծանք վատէն,
Ազատ ելաւ ամէն շունչ.
Կախաղան իսկ թող մեզ հանեն.
Մեզ իրաւունք — մեր մրռունչ
Այդ է մինչեւ վերջին շունչ։

Ա՜հ՝ենք տեսեր ենք ձեր մեծ փառքը,
Ձեր հանդէսներ ու քեֆեր,
Մեր կիներին հետ ձեր վարքը
Եւ մեր կերած ապտակներ։
Սուլթանների հարէմն ու գանձ,
Մեզ խաբելով, լեցուցիք,
Մեր աշխատանք, մեր տուն, մեր անձ
Անոնց ոտաց ձրգեցիք։
Դուք սըրիկայ խումբ մը կազմած,
Մեր թշնամուն դաւակից, —
Մարմնի տեղ մեզ կըմախք մընաց,
Կեանքն ալ՝ դըժոխք տանջալից։

Թշուառութիւնն իր քէնն ունի
Եւ տանջանքըն իր սահման.
Մենք յուզուեցանք խիստ կատաղի,
Մեր կամք՝ մեզի հըրաման։
Թշնամու հետ դուք կը ճգնէք
Խղդել արեան մէջ մեր շունչ....
Կախաղան իսկ կուզէք՝ տարէք,
Կեա՞նք ու ապրո՞ւստ — մեր մրռունչ
Այդ է մինչեւ վերջին շունչ։

Մինչեւ հիմա ըստրուկ էինք,
Մեր իրաւունք դուք խլած,
Տըզրուկներիդ մենք կուր էինք՝
Ձեռք ու ոտքեր շղթայված։
Ոչինչ էինք մինչեւ այսօր,
Ամէն բան ենք այժմ ու տէր։
Ձէ՞ք լըսեր դուք ձայն ահաւոր
Արեան դաշտէն... Սրիկաներ,
Դուք բաւական մեզ մորթեցիք,
Հիմա մեր կարգը եկաւ...
Ա՜հ, մեր կենաց գողեր, հերիք...
Վայ նրա՜ն մեզնէ, ով ընկաւ...

Թշուառութիւնն իր քէնն ունի
Եւ տանջանքըն՝ իր սահման,
Աշխատողն է տէրն աշխարհի
Եւ ամենքին — մի պայման։
Ընդդէմ ձեր և բռնաւորի
Զայրոյթ ու ոխ դառնաշունչ
Մեր մէջ կեռան... Ելնե՞նք կուի...
Հա՜ց, հա՜ց և բաղդ — մեր մրռունչ
Այդ է մինչեւ վերջին շունչ։

20 Յունիսի 94. ԽԵՆԹԸ.

„ԱՊՏԱԿԸ" Կ. ՊՕԼՍՈՒՄ.

Օնբաշիութեան պաշտօնը բաւական ժամանակից ի վեր ստացած սուլթան Համիդի օրով, — երանելի Աշըգեանի աղօթքների շնորհով դէպի այդ՝ արիւնով օծված թագակիրը մենք միշտ որդիական խորին ակնածութիւն ունենք միայն, — այդ օնբաշիի գերիշխանութեան օրով, ասում ենք, Թիւրքիայում ամէն բան տակն ու վըրայ է գնում։ Ո՞ւր է կառավարութիւն, ո՞ւր է իշխանութիւն, ո՞ւր է հարուստ, ո՞ւր է կթան-կով գիւղացի, ո՞ւր է կարգ-կանոն — ինքն Ալլահն էլ չը գիտէ։ Դիոգինէսի լապտերով էլ պտտես, բան չես գտնիլ։ Կատարեալ քաոս.... և հայ յեղափոխական տագնապ։ Եւ հէնց այդ երկու բանի շնորհով է, որ քիւրդերի սուլթանը քիչ մնաց զրկվեր ընդ միշտ մէկ այնպիսի սքանչելի ծառայից, ինչպիսին է Մաքսուտ Սիմօն բէյը, իր եռանդուն ոտնալէզը։ Այս խեղճ հարուստը, որ իր կեանքում ուրիշ ոչ մի չարութիւն չէ արել բացի ժողովրդի արիւնը ծծելուց ու հարստութիւն դիզելուց, և ուրիշ ոչ մի վատութիւն չէ գործել բացի նրանից, որ քսակի ու փառքի համար ծախում էր իր ազգին, շարունակ դաւաճանելով սրան, սրա շահերը, և ապա նաեւ Աշըգեանի հետ ձեռք ձեռքի տված՝ թմբուկ զարկում, որպէսզի թիւրքը հայկական խնդրի վերաբերութեամբ իր քաղաքականութեան մէջ եռանդով ջանքազութիւն (լարախաղութիւն) անի, — այդ վսեմաշուք թմբկահարն, ասում ենք, անցեալ ամիս, հնչակեանի վրիժառու գնդակից գեհենը լցեց — իր կեանքում առաջին անգամ առանց շողոքորթութեան։

Դրա վրայ ամբողջ Կ. Պոլիսը — ոստիկանութիւն, զօրք, կառավարութիւն, դեսպանատներ, ամէն ազգերի շրջաններ, ժողովրդներ — ամենքն իրարանցման մէջ ընկան և յուզվեցան, ի հարկէ, զանազան կերպով և տարբեր զգացումով ու տեսակէտերից։ Ոսկէ դղեակներն ու ապարանները, որոնց մէջ իր բերդն է կառուցել սուլթանի Մաքսուտ ծառան, չը կարողացան ընդրան պաշտպանել հայ յեղափոխականի կապարից, հակառակ սուլթանական սոսկալի պատիժներին։

Ի՜նչ ազգու և տպաւորիչ դաս մեր բոլոր Մաքսուտ Սիմօն բէյերի համար։

— 0 —

Արդէն „Ապտակի" լրաբերը թերթիս նախորդ համարում հաղորդեց մեր ընթերցողներին, որ թշուառ Մաքսուտի դէպքի վրայ Աշըգեանը՝ մի կարգ ուրիշ ջոջերի հետ փոխհարութեան ախտով էր վարակվել։ Ցաւով պէտք է յայտնենք, որ մեր վերջին տեղեկութիւններն աւելի անմխիթար են։ Հայոց շէյխը — որովհետեւ հայերս էլ հիմա շէյխ ունենք՝ շնորհով մեր սրբազան պատրի սրբի — այս ամսայ մէջ Կ. Պոլսի Հնչակեան Մասնաճիւղի Վարչական Ժողովի կնիքով կընքված մի գրութիւն է ստացել, որի մէջ՝ հայոց այդ „հովուի" համար փոքր-ինչ խիստ ազգուոճով՝ նրան հրաւիրում են թողնել իր աթոռը և շտապել գնալ իր այծերն ու ոչխարներն արածացնել Արմաշու հարազատ վանքում։ Աշըգեանի տեղապահը նմանապէս արժանացել է Հընչակեանների տված՝ իրան համար այդ փոքր-ինչ խիստ դասին։ Միւս կողմից, Կ. Պոլսի բոլոր եկեղեցիների պատարագիչներն էլ նոյն Վարչական Ժողովից ստացել են ազդարարութիւն, թէ Աշըգեանն այլ ևս պաշտօնազուրկ է եղել — ոչ սուլթանի, ի հարկէ, այլ Հնչակեանների հրամանով, և որ նրա անունն այլ ևս չը յիշվի պատարագի ժամանակ։ Թէև սուլթանը դրա հակառակը հրամայեց, բայց պատարագիչները նախամեծար են համարել ճանաչել ոչ թէ սուլթանի, այլ Հնչակեանների հրամանը, որովհետև այդ երկու վերջինների զօրութիւնն անհաւասար է։ Պատարագիչները նախամեծար են համարում աւելի զօրաւորի հրամանը լսել և. մինչեւ իսկ ոմանք եկեղեցին փակ են թողել։ Ի հարկէ, շրջահայեաց կերպով են վարվում. իրանց կեանքում նրանք միշտ թեքվել են ոյժի կողմը և հակառակել իրաւունքին, այս անգամ, — գէթ մէկ անգամ իրանց կեանքում — ոյժի կողմը թեքվելով, այդտեղ գտել են նաև իրաւունքը. թէև դա իրանց համար ողջ մէկ է. նրանց աստուածը՝ բըռունցքն է։

պատրաստում, նրանց գլուխ ենք տալիս, նրանց ոտքի փոշիներն ենք լիզում։ Իսկ նրանք արհամարհելով մեզ, կոշտ գիւղացիներիս, կոխոտում են մեզ, իրանց երջանկացնողի վրայ նայում են իբրը մի գարշելի սողունի վրայ։ Նրանք վախեցընում են մեզ բանտով, սրով, մահով, իսկ մեր հոգեւորականները մեզ վախեցնում են Աստուծոյ բանտով, դժոխքով, սատանաների պոզերով (եղջիւր) և յաւիտենական մահով։ Այդ ամենը կատարվում են մի յայտնի նախագծով։ Նրանք ուզում են խեղդել մեզանում այն ամէն զգացումները, որ կարող կը լինեն արթնացնել մեր մէջ ինքնաճանաչութեան ոգին։ Նրանք լաւ գիտեն, թէ ի՞նչ ահագին անկում եւ ի՞նչ մեծ թշուառութիւն կը սպառնայ իրանց, եթէ գիւղացիները չը լինեն իրանց հիմակւայ վիճակում, և հէնց այդ պատճառով էլ նրանք միշտ թշնամիներ են այն մարդկանց, որոնք բարեկամ են եղել ժողովրդին. օրինակ, նրանք միշտ հալածում են վարժապետներին և ատելով ատում են դպրոցականներին։ Ինչո՞ւ։ Որովհետեւ այս վերջիններս իրանց բարոյական պարտքն են համարում համակրել ժողովրդին. նրան հասկացնել իր անկման պատճառները. կարեկցում են գիւղացուն և նրան այդ անտանելի վիճակից ազատելու համար միջոցներ են խորհում։

— Մենք տանում ենք ամէն բան, շարունակեց Թաթոսը, քիչ աւելի բարձրացնելով իր ձայնը, մերկացնում են մեզ, մենք բողոքում ենք Աստծուն, որ պատժէ նրանց. բռնաբարում, անպատուում են մեր աղջիկներին, մեր հարսերին, իսկ մենք լուռ ու մունջ արտասվում ենք և գալոց աշխարհի դատաստանին ենք յանձնում անխիղճ յանցաւորին։ Մենք մոռանում ենք մեր իսկական ոյժը, մեր բազուկները, և երբէք էլ չենք մտածում՝ մէկ օր նրանց գործածել։ Մենք զէնք ենք տալիս մեր թշնամի ձեռքը և յետոյ աղաչում ենք; որ նա մեզ չը խփէ։ Այդ պայմանի տակ ի՞նչ յանցանք ունի մեր թշնամին. նա ուրիշ բան չէ անում, եթէ ոչ կուշտ-կուշտ ծիծաղում մեր տըխմարութեան վրայ։ Մենք չենք կարող մեղադրել նրան և իրաւունք էլ չունենք. մենք իսկապէս պէտք է մեղադրենք մեր անձը, որ առանց հեռեւանքը մտածելու զէնք ենք տալիս մեր թշնամին։ Ասա՛, կապետ, ո՞վ է հիմա մեր բուն թշնամին. մեր հակառակորդը, որ մեր զէնքով մեզ սպանում է, ոչնչացնում և մեր արիւնն է ծծում, թէ մենք, որ յօժար կերպով նրան տվինք այդ զէնքը, նրա համար բացինք մեր երակները, մեր քսակը և նրա առջեւ գլուխ ծռեցինք ամէն պարագաներում։ Շիրին-Ալին ասպատակում է մեր երկրում. նա օր ցերեկով մեր գոմէշներից ողջ-ողջ քերթում է մի զոյգ տրեխի կաշի և մի քիչ էլ միս կտրելով, հեռանում։ Նա կրակ է տալիս մեր կալերը, մեր մարագները։ Իսկ մենք ի՞նչ ենք անում։ Լուռ ու մունջ դիտում ենք այդ ամենը, այս ու այն անձին ենք դիմում, հիքմէթին գանգատ տալիս, որի պատուէրով ու հաշուով հէնց դուրս է եկել Շիրին-Ալին։ Մենք երբէք չենք աշխատում մեր ձեռքով վճռել մեր դատը...

Կապետը լուռ լսում էր. նրա երիտասարդական արիւնը եռում էր, նրանում կատարվում էր մէկ ինչ-որ ներքին յեղաշրջութիւն։ Ապրելով ազատ անտառների խորքում, գիւղական ամենահամեստ կեանքով, նրա ուղեղը չէր փոել նրա միտքը բաց էր և ամէն բանի ընդունակ. նա հիմա Թաթոսի վրայ նայում էր բոլորովին ուրիշ աչքով։ Նա այդ նիհար երիտասարդի նեղ աչքերում տեսնում էր մէկ աւելի փայլուն լոյս, որը կարողացել էր թափանցել գիւղական կեանքի ամենամութ խորշերը. նա մէկ-մէկ կշռում էր նրա խօսքերը և իրաւունք էր տալիս։ Նա առաջուց էլ լսել էր շատ բաներ իրանց, գիւղացիների, նկատմամբ, բայց այնքան ուշադրութիւն չէր դարձրել որքան այսօր...

Եւ կապետը ծխում էր իր նոր վառած ծըխախոտը, ագահութեամբ կուլ տալիս նրա ծուխը, կարծես խեղդել էր ուզում այն հոգեկան չափազանց յուզումը, որ առաջացել էր Թաթոսի խօսքերից։

Նրանց մօտեցաւ Մինասը, „Ողորմի Աստուած" ասաց և նստեց Թաթոսի մօտ։ Մինասը գեղեցիկ մի տղամարդ էր, հազիւ 26 տարեկան, միջահասակ. իր սեւ սաթի նման աղեղնաձեւ յօնքերի տակ փայլում էին երկու խոհուն սեւ աչքեր, որոնք միեւնոյն ժամանակ արտայայտում էին վայրենի քաջութիւն ու արհամարհանք։

(Կը շարունակվի) ԱԽՈՒՐ—ՌԱՄԻԿ.

ԵՒ Ո՞Վ Է ԱՍՈՒՄ, ԹԷ ՎՆԱՍԱԿԱՐ ՉԷ „ՀՆՉԱԿԸ"... ԳԷԹ ՄԵՐ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ· ՆԱ ՀԱՅՈՑ ՄԷՋ ՄՏՑՐԵՑ ՍՕՑԻԱԼԻԶՄԻ ԵՐԵՒՈՅԹԸ, ՈՐԻՑ ՍԱՐՍԱՓԱԾ ՓԱԽՉՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԲՈԼՈՐ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԸ, ՇՓՈԹՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԻՄԵԱՆՑ ՔԻԹՆ ՈՒ ՊՌՈՒՆԿԸ ԿՈՏՐԵԼՈՎ......

Մ՚էկ անձ, որ ամենից շատ մտատանջութեան մէջ է ընկել Մաքսուտի սպանութեան փորձի վրայ, դա Կ. Պօլսի ոստիկանութեան մինիստր Նազըմ բէյն է: Մէկ-երկու տարի առաջ, իր սուլթանի ոտները պագնելով, նա հանգստացնում էր օսմանեան գահի քաջարի տիրոջին, որ „ա ր թ ը գ ը բ ի թ տ ի" (այժմ վերջացաւ): Բայց իր ինքնակալի գլխին նա այդ խօսքով մի սոփեստական խաղ էր խաղացել, որ այժմ միայն սուլթանը հասկացել է: Այդ սոփեստութիւնը, կամ աւելի ճիշդ՝ աչքակապութիւնը կայանում է մի բառախաղութեան մէջ, որ հետեւեալն է: Թիւրքերէն „բիթտի" ոչ միայն „վերջացաւ" է նշանակում, այլ նաեւ „բ ո ւ ս ա ւ"... Նազըմը չէր սխալվում. այն ժամանակները հայ յեղափոխական շարժումները բ ո ւ ս ա ն և այսօր արդէն աճել են, ինչպէս տեսնում է ինքը, և դեռ յամառաբար շարունակում են աճել. — այնպէս չէ, Նսեժափայլ բէյ: Ապրողը՝ տեսնում է և ով կապրէ՝ կը տեսնէ դարձեալ: Իսկ առայժմ Նազըմն, իր սուլթանին հանգստացնելու համար, թող լրտեսների թիւը շատացնէ և որքան կարող է շատ հայ ձերբակալէ, — ոչինչ, թէ անմեղներ են ձերբակալվածները: Չէ՞ որ ինչպէս իր լրտեսներն իր աչքին, նոյնպէս ինքը սուլթանի աչքին պէտք է գ ո ր ծ ո ւ ն է ո ւ թ ի ւ ն ցոյց տայ: Սուրբ որսորդութիւն է արածդ. շարունակիր... արդէն երկար չը պիտի տեւէ....

?

Ս տ ո՞ յ գ է, արդեօք որ Նազըմ բէյը բոլորովին վախկոտ չէ և ա է լ ա մ լ ը խ ի օրը, մանաւանդ Մաքսուտ Սիմօն բէյի յայտնի դէպքից յետոյ, անթիւ զօրքերով ու հեծելազօրներով շըրջապատված է գնում կառքով դէպի իր աղօթատեղին: Եւ պէտք է տեսնել, թէ այդ կենդանի, շարժուն բերդի կենդանի, շարժուն պարիսպներով պաշարված՝ ինչ խրոխտ հայեացք ու դէմք ունի նա: Օ՜, քաջարի մարդ:

***

Ս տ ո՞ յ գ է արդեօք, որ Երուսաղէմի պարարտ

Ցարութիւնը և Կ. Պօլսի լալկան Աշըգեանը բերանաբաց են մնացել և դեղնել-կապտել, կարդալով „Հնչակի" յայտնութիւններն իրանց և Բ. Դռան գաղտնի նախագծերի մասին Կիլիկիայի կաթողիկոսական աթոռի վերաբերութեամբ: Բայց ինչո՞ւ են շտապում յուսահատվելու. թող սպասեն քիչ էլ. ինչպէս երեւում է իրանց ատելի „Հնչակը" դեռ պէտք է հաղորդէ երկու կուսակրօն և սուրբ պատրիարքների ու Բ. Դռան այդ նախագծերի յետագայ ընթացքի ու ներկայ վիճակի մասին հետաքրքիր նորութիւններ: Իրանց ջղերը թող քիչ էլ կազդուրեն մեր երկու երանելի պատրիարքները. այդ շատ պէտք է նրանց:

***

Ս տ ո՞ յ գ է արդեօք, որ չէյխ Աշըղն ստանալով թնդանօթի գնդակի նման Հնչակեանների գրութիւնը՝ շուտով հրաժարվել պատրիարքութիւնից, բացականչել է. „ա՜հ, այս անիծեալ Հնչակեանք վերջը պիտի հախէս գան", ապա ուշաթափ է եղել: Ցետոյ նոյն գրութիւնը ղրկել է իր հայրագորով սուլթանին, օգնութիւն աղերսելով և այս վերջինս պատասխանել է. „Անիծեցիր Հնչակեաններին, բայց քո Աստուածդ ամենակարող չէ երեւում. եկ մեր մեծն Ալլահի գիրկը": Հապա երբ պէտք է Աշըղը պաշտօնապէս ստանայ իր սուլթանի պարգեւը — չէյխի սպիտակ ահագին փաթթոցը:

***

Ս տ ո՞ յ գ է արդեօք, որ իրանց աղա Մաքսուտի յայտնի դէպքից յետոյ Կ. Պօլսի մեր բոլոր մեծամեծները, ազգասէրները, ազգային գործերի վարիչներն իրանց մանր ու մեծ որբանեակներով հետեւել են Մաքսուտի խորհրդին և բոլորովին հեռացել են ազգային ասպարէզից: Եթէ այդ ստոյգ է, որպիսի մաքուր օդ պէտք է խաղայ հայ ազգային ասպարէզի վրայ, որը վերջապէս ազատված կը լինի հայ ժողովրդի այդ փսխունքից, որ ազգային գործիչներ են իրանց կոչում...



ԹՈՒՐՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏՈՒՄ ԵՒ ՀԱՅ ՃՈՃԵՐԻ ՔԱՋԱԼԵՐԻՉ ԴԵՐԸ ԴՐԱ ՄԷՋ·

ԱԹԷՆՔ· „ՀՆՉԱԿԻ" ՏՊԱՐԱՆ·